ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «04» հոկտեմբերի, 2023 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 31-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 2045-Ա/2 հրամանով հաստատված «Գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի կարգով» և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 4-ի N 2050-Ա/2 հրամանը՝ գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու հայտերի ընտրության մրցույթը պատշաճ կազմակերպելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Շ. Աղաբեկյան)՝ ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ինտերնետային կայքում:
2. Գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետի պարտականությունները կատարող Ա. Հովհաննիսյան)՝
   1) կազմակերպել տեղեկատվական խորհրդատվություն,
   2) ապահովել սահմանված կարգով մրցույթին ներկայացված հայտերի ընդունումը,
   3) տրամադրել հայտերը մրցութային հանձնաժողովին:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնող Լևոն Ֆարմանյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ